ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ՅՈԳՆԱԾՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ամենքին յայտնի է, որ ժուլութիւնը հետևանք է մարդու կաղմուածքի մկանային և նեարդային համակարդութեան սաստիկ թուլութեան. ծոյլ կամ անընդհատ յոգնած մարդը ընդունակ չէ աշխատելու։ Ահա թէ ինչու դիտնականները երկար ժամանակ է ինչ զբաղուած են յոգնածութեան հետազօտութեամբ, բայց մինչև այժմ ոչ մի հետևանքի չէին հասել։ Միայն նորերս Բերլինի բժիշկ Վէյհարդին յաջողուել է դտնել յոգնածութեան պատուասար։

Կենդանի կաղմուածքի ամեն մի մկանային և նեարդային աշխատանքի ժամանակ, տեղի են ունենում մի շարք քիմիական, էլեքտրական և մեքենայական դործողութիւններ, որոնք պատճառ են լինում մկանային և նեարդային հիւսուածքների քայքայման։ Այդ դործողութիւններից առաջ են դալիս մի շարք նոր դոյացութիւններ, որոնք իրանց մէջ թոյն են պարունակում։ Ցիշեալ թոյնը թունաւորելով մարդուս կաղմուածքը նրան դարձնում է թոյլ և դործելու անկարող։

Բժշկապետ Բանկէն դտաւ, որ յոգնածութեան դլխաւոր թոյնը մսակաթնային թթուուան է։ Սպիրոյի փորձերը ցոյց են տուել, որ մսակաթնային թթուուտը խիստ յոգնածութեան ժամանակ հաւաքւում է արեան մէջ։ Մասսօն բազմիցս անդամ կատարել է հետևեալ փորձը՝ կենդանուն, օրինակ՝ շանը, այնքան են վազեցնում, մինչևոր նա յոգնածութիւնից վայր է ընկնում։ Այդ շան արիւնը սրսկում են մի ուրիշ՝ առողջ և հանդիստ շանը։ Այս դործողութիւնից անմիջապէս յետոյ վերջինիս վրայ նկատւում են յոգնածութեան բոլոր նշանները։

Հարկաւոր է ասել, որ բացի կատարեալ յոգնածութիւնից

կայ և յարաբերական յոգնածութիւն։ Ցաճախ ասում են «մարդը յոգնել է, նրա մկանները ընդունակ չեն աշխատելու», այդ ճիշտ չէ։ Մինչև կաղմուածքը ապրում է, չ'նայելով նրա յոգնածութեան, միշտ կարելի է արհեստական կերպով մկանները ի կծկում առաջացնել։ Սորանից երևում է, որ դեռևս չ'մեռած կենդանու յոգնածութիւնը կարող է լինել միայն յարաբերական. այսինքն՝ թէպէտ մկանները այլևս չեն հնազանդում նրա կենդրոնական ուղեղային դործիքին, բայց դեռ ընդունակ են կրծկուելու։ Մինչդեռ կատարեալ թուլութիւնը նշանակում է մահ, կամ նրա դործնական նիւթի քիմիապէս այրուելը։

Այսպէս ուրեմն Վէյհարդը մկանը հասցնում էր մինչև կատարեալ յոգնածութեան. այնուհետև լաւ չարդում էր, հարում և ստացուած դանդուածից հիւթ պատրաստում. ապա ստիճանաբար հանելով յայտնի և արդէն հետազօտուած հիւթերը, մնացորդը թորում էր կենդանու թաղանթի միջով։ Այս կերպով նրան յաջողուեց ստանալ յոգնածութեան թոյնը մաքուր տեսակի, որ և անուանուեց յոգնածութեան տոկսին։

Այս դիւտից յետոյ Վէյհարդը փոխեց իր ծրագիրը և փորձեց յոգնածութեան տոկսինի դէմ հակաթոյն դտնել։

Նրա ջանքերը իդուր չ'անցան և նրան յաջողուեց դտնել հակայոգնածութեան շիճուկը։

Բայց ասած է «չիք բարիք առանց չարեաց և չարիք առանց բարեաց». հակայոգնածութեան շիճուկը ոչնչացնելով յոգնածութեան անախորժ ղդացողութիւնը, միևնոյն ժամանակ ղրկում է կաղմուածքը ֆիղիքական աշխատանքը կանոնաւորող ոյժից։ Բայց չպէտք է մոռանալ, որ դիւտը դեռ նոր է. պարդ է, որ դիտութիւնը դորանով չի բաւականանայ, այլ կ'ջանայ չեղոքացնել և ինքնակար կողմի ոյժը։

Փորձերը առ այժմ կատարուել են միայն կենդանիների վրայ, բայց կան հիմունքներ, որոնք թոյլ են տալիս հաստատ համոզուելու, որ այս ամենը դործադրելի կ'լինի և մարդու վերաբերմամբ։

Օր. Նուարդ Աղաննանց